ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-Ը ՄԱՐՏԻ 2017 Թ N 13-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲԱԶՄԱԲՆԱԿԱՐԱՆ ԲՆԱԿԵԼԻ ՇԵՆՔ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՀՈՂԱՄԱՍ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓՈԽԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածի դրույթներով, համաձայն ՀՀ ,,Տեղական ինքնակառավարման մասին,,օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետի պահանջների,հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը՝
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է.

1.Թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքային սեփականություն համարվող 2448,89 քմ բնակավայրերի այլ նշանակության հողամասի և 603,48 քմ բնակավայրերի ընդհանուր օգտագործման հողամասի գործառնական նշանակությունները /հողատեսքերը/փոխել բնակավայրերի բնակելի կառուցապատման:
2. Ապարան համայնքում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցելու նպատակով հատկացնել 3052,37 քմ հողատարածք՝ համաձայն հաստատված հատակագծի:
3.Համայնքի ղեկավարին՝ ընդունել համապատասխան որոշում և նախապատրաստել անհրաժեշտ փաստաթղթեր հողամասերի գործառնական նշանակությունների փոփոխման համար:

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Գնել Մուրադյան
Մորիս Սարիբեկյան
Ասատուր Քոչարյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
Էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-Ը ՄԱՐՏԻ 2017 Թ N 14-Ն

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության ,,Տեղական ինքնակառավարման մասին,, օրենքի 18-րդ հոդվածի 1/5 կետի, 35-րդ հոդվածի, ,,Բյուջետային համակարգի մասին,, օրենքի 35-րդ հոդվածի պահանջներին համապատասխան.
Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի 2016 թ բյուջեի կատարման հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Համայնքի ղեկավար պարոն Գ. Աբրահամյանին՝
ա/.ավելի ակտիվացնել աշխատանքները՝ հողի և գույքի հարկերի բազաների ճշտգրման, տեղական հարկերի, տեղական տուրքերի և վարձավճարների հավաքագրման ուղղությամբ: Այդ աշխատանքներում ապահովել անհրաժեշտ հրապարակայնություն ու թափանցիկություն:
բ/.անհրաժեշտ քայլեր ձեռնարկել համայնքի ֆոնդային բյուջեի կատարման ուղղությամբ:
գ/.բարձրացնել աշխատակազմի և համայնքային կազմակերպությունների ղեկավարների պատասխանատվությունը՝ համայնքի 2017 թ բյուջեի եկամուտների հավաքագրման գործում պատշաճ մասնակցություն դրսևորելու, բյուջեի կատարումն ապահովելու, բյուջետային միջոցների արդյունավետ և նպատակային ծախսման ուղղությամբ:

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Գնել Մուրադյան
Մորիս Սարիբեկյան
Ասատուր Քոչարյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

ՀԱՎԵԼՎԱԾ

ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 Թ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ապարանի քաղաքային համայնքի 2016 թ տարեկան բյուջեն կատարվել է 100,8 %-ով,իսկ սեփական եկամուտների մասով՝ 102,7 %-ով: Որի արդյունքում ապահովել է համայնքի կենսագործունեության բնականոն գործունեությունը:

Ապահովվել է կատարված աշխատանքների թափանցիկությունն ու հրապարակայնությունը:

Ավագանու որոշումները, համայնքի ղեկավարի կողմից ընդունված իրավական և վարչական ակտերը, համայնքի բյուջեն և նրա կատարողականները, կատարված բոլոր ծախսերը, տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների օրեկան մուտքերը, համայնքապետարանի առօրյա գործունեության բոլոր հիմնական գործառույթներն ընդգրկվել են համայնքային կայքում, որը հասու է համայնքի յուրաքանչյուր բնակչի:

Անհրաժեշտ աշխատանքներ են տարվել տեղական հարկերի, տուրքերի ու վարձավճարների շտեմարանների ճշգրտման, համայնքի սեփական եկամուտների հաշվարկային ցուցանիշների ճիշտ արտահայտման ուղղությամբ:

Հարկատուներին են ուղարկվել ծանուցագրեր, նախազգուշացման տեղեկանքներ, էլ. կայքի միջոցով տրվել են հայտարարություններ, տարվել են ամենօրյա օպերատիվ հաշվառում և վերլուծություն, բացատրական և նախազգուշական աշխատանքներ:

Անհրաժեշտ հետևողականություն է դրսևորվել համայնքի բյուջեի մուտերի ապահովման, ֆինանսական միջոցների նպատակային և արդյունավետ օգտագործման ուղղությամբ

Համայնքի 2016 թ բյուջեն պլանավորվել և կատարվել է հետևյալ ցուցանիշներով՝

եկամտատեսակներ	2016թ պլան ՀՀ դրամ /մլն/	2016 Թ կատարողական	Կատարման %
ՀՀ կառավարության կողմից տրված դոտացիա	105.926,8	105.926,8	100,0
ՀՀ կառավաության կողմից տրված այլ դոտացիա	17.133,0	17.133,0	100,0
ՀՀԿ կողմից արվեստի դպրոցին տրվող սուբվենցիա	4001,0	4001,0	100,0
ՔԿԱԳ բաժնին տրվող սուբվենցիա	5.552,7	5.552,7	100,0
Համայնքի վարչական մասով սեփական եկամուտներ	56.000,0	57524,4	102,7
ԸՆԴԱՄԵՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵ	188.613,5	190.137,9	100,8

Համայնքի բյուջեի 2016 թ սեփական եկամուտների պլանավորման և կատարման ցուցանիշները՝

հ/հ	եկամտատեսակներ	2016 թ պլան ՀՀ դրամ/հազ./	կատարողական	Կատարման %
1	Հողի հարկ	8000,0	8054,9	100,7
2	Հողի և գույքի վարձակալություն	3600,0	3541,1	98,4
3	Գույքահարկ	21000,0	23387,0	111,4
4	Տեղական տուրքեր և վճարներ	3900,0	3406,4	87,3
5	Պետական տուրքեր	2400,0	2118,0	88,3
6	Վարձավճարներ	7500,0	7453,5	99,4
7	Այլ եկամուտներ	9600,0	9563,5	99,6
ԸՆԴԱՄԵՆԸ ՎԱՐՉԱԿԱՆ ԲՅՈՒՋԵ		56.000,0	57524,4	102,7
ԸՆԴԱՄԵՆԸ ՖՈՆԴԱՅԻՆ ԲՅՈՒՋԵ		10.000,0	2086,0	20,9
ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		66.000,0	59610,4	90,3

Համայնքի բյուջեի սեփական եկամուտները ձևավորման, տեղական հարկերի, տուրքերի և վարձավճարների հավաքագրման գործում առկա են թերություններ և բացթողումներ:
Դեռևս մեծ թիվ են կազմում համայնքից երկար տարիներ բացակայող պատքատերերը, մահացած և նրանց ժառանգությունը չբացողները:
288 բացակայողներն ունեն շուրջ 126,6 հա հողամասեր, 274 մահացածների անունով առկա են 172,9 հա հողամասեր: Նրանց ընդհանուր պարտքերը կազմում են շուրջ 16,0 միլիոն դրամ:
Քիչ թիվ չեն կազմում նաև այն հարկատուները, ովքեր ամենատարբեր սուբյեկտիվ և օբյեկտիվ պատճառներով չեն վճարում հարկերը:
Հարկային պարտավորությունները խախտած 71 ֆիզիկական անձանց նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ, 17 հարկատուների հետ կազմվել են պարտքերի աստիճանական մարման ժամանակացույցեր, որոնցից 7-ն ամբողջությամն մարել են պարտքերը:
Դեռևս խնդիրներ կան տեղական տուրքերի ժամանակին վճարման գործում: Տեղական տուրքեր վճարող և ապա գործունեություն ծավալող գործարարները ձգձգումով են կատարում վճարումները:
Ֆոնդային բյուջեն կատարվել է 20,9 %-ով: Թերակատարման հիմնական պատճառը վաճառքի ենթակա հողատարածքների պահանջարկի բացակայությունն է:
26 միավոր տնամերձ և 31 միավոր գյուղ. նշանակության հողամասերի օտարման նպատակով բազմաթիվ անգամներ հայտարարվել են աճուրդ-վաճառքներ, սակայն գնորդների բացակայության պատճառով դրանք չեն կայացել:
2016 թ վաճառվել է ընդամենը 7 միավոր հողամասեր՝ 1793,2 քմ ընդհանուր մակերեսով, 1.340.478 դրամ արժեքով:
2016 թ բյուջեի տարեկան ծախսերը կազմել են 199268,7 հազ. դրամ, պլանավորված 207950,7 դրամի դիմաց, կամ՝ այն կատարվել է 95,8 %-ով, խնայողությունը կազմել է 4,2 %::

2016 Թ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ՝

N	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ՊԼԱՆ /հազ.դրամ/	ԿԱՏԱՐՎԵԼ Է /հազ. դրամ/	ԿԱՏԱՐՄԱՆ %
	ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝	207950,7	199268,7	95,8
1	Ընդհանուր բնույթի հանրային ծառայությունների մասով՝	58588,2	53665,9	91,6
	Որից՝			
-	Օրենսդիր և գործադիր մարմիններ և պետական կառավարում	45463,0	43802,0	96,3
-	Հիմնական խմբին չդասվող պարտքային պարտավորություն	1167,8	1109,4	95,0
-	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	11957,4	8754,5	73,2
2	ՔԿԱԳ բաժնի պահպանում	5552,7	5552,7	100,0
3	Բնակարանաշինություն և կոմունալ ծախսեր՝	34245,0	32220,0	94,1
	Որից՝			
-	Բնակարանային շինարարություն, փողոցների լուսավորություն	3200,0	1350,0	42,8
	Կոմունալ ծառայություն	31045,0	30870,0	99,4
4	Հանգիստ, մշակույթ և կրոն բնագավառի մասով	24195,0	23772,2	98,3
	Որից՝			
-	Գրադարանի մասով	8450,0	8117,2	96,1
-	Մշակույթի մասով	15745,0	15655,0	99,4
5	Կրթության բնագավառի մասով՝	73932,3	72769,3	98,4
	Որից՝			
-	Նախադպրոցական կրթության բնագավառի մասով՝	26230,0	26041,5	99,3
-	Նախնական մասնագիտական կՊության բնագավառի մասով՝	10335,0	10235,0	99,0
-	Արտադպրոցական դաստիարակության բնագավառի մասով	37367,3	36492,8	97,7
6	Սոցիալական հատուկ արտոնություններ բնագավառի մասով	4500,0	4351,4	96,7
7	Ճանապարհային տնտեսություն	6937,5	6937,2	100,0

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ,Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-Ը ՄԱՐՏԻ 2017 Թ N 15-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության 14.04.2011թ. թիվ 389-Ն և 02.09.2016թ թիվ 898-Ն որոշումների պահանջներով, նպատակ ունենալով կանոնակարգելու Ապարանի քաղաքային համայնքի վարչական սահմաններում գտնվող արոտավայրերի և խոտհարքների օգտագործման կարգը և վարձակալության տրամադրման վարձավճարների դրույքաչափերը. Ապարանի քաղաքային համայնքի ավագանի նորոշում է՝

1. Հաստատել Ապարանի քաղաքային համայնքի վարչական տարածքում գտնվող խոտհարքերի և արոտավայրերի օգտագործման կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հաստատել արոտավայրերի օգտագործման տրամադրման 1հա-ի վարձավճարի մեկնարկային գինը՝ քաղաքամերձ արոտավայրերի համար՝ 2300դրամ, հավելաճի քայլը՝ 200 դրամ, հեռագնա արոտավայրերի համար՝ ենթալպյան 2625դրամ, հավելաճի քայլը 135 դրամ, ալպյան՝ 1230դրամ, հավելաճի քայլը՝ 70դրամ:
3. Հաստատել խոտհարքերի օգտագործման տրամադրման 1 հա-ի վարձավճարի մեկնարկային գինը՝ հեռագնա ենթալպյան խոտհարքի համար՝ 3270 դրամ, հավելաճի քայլը՝ 200 դրամ:
4. Ընդունել ի գիտություն, որ ՀՀ կառավարության 2010թ. թիվ1477 որոշման համաձայն՝ մինչև 3 տարի ժամկետով արոտավայրերի վարձակալությունը կատարվում է առանց մրցույթի:

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Գնել Մուրադյան
Մորիս Սարիբեկյան
Ասատուր Քոչարյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան

Հավելված

ԿԱՐԳ

ԱՊԱՐԱՆԻՔԱՂԱՔԱՅԻՆՀԱՄԱՅՆՔԻՎԱՐՉԱԿԱՆՏԱՐԱԾՔՈՒՄԳՏՆՎՈՂ ԱՐՈՏԱՎԱՅՐԵՐԻ ԵՎ ԽՈՏՀԱՐՔՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

1.Սույն կարգով սահմանվում են Ապարանի քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող հողերի վրա գտնվող արոտավայրերի կառավարման և արդյունավետ օգտագործման պայմանները:

2. Արոտային շրջանի տևողությունը՝

- խոշոր եղջերավոր կենդանիների համար՝ 150-170 օր,

- մանր եղջերավոր կենդանիների համար՝ 180-210 օր:

3. Միևնույն արոտատարածքում ամբողջական բոլորապտույտով արածացումների թիվն ամբողջ արոտային շրջանում սահմանվում է 5-6 անգամ:

4.Արոտային բեռնվածության որոշման նպատակով մեկ պայմանական կենդանու գլխաքանակին տարբեր գյուղ. կենդանիները հավասարեցվում են հետևյալ գործակիցներով՝

1) կով, արտադրողցուլ – 1,0

2) խոշոր եղջերավոր կենդանիների սեռահասկային այլ խմբեր – 0,66

3) մանր եղջերավոր կենդանի – 0, 1

5. Արածեցման արդյունավետ եղանակը հերթափոխային արածեցումն է, որի կիրառման համար արոտատարածքը պետք է բաժանել արոտավանդակների, որոնց մեծությունը 100 պայմանական անասնագլխաքանակ ընդգրկող նախրի համար կազմում է՝ 10-20 հա:

6. Մեկ պայմանական գլխաքանակի համար ամբողջ արոտային շրջանում անհրաժեշտ Արոտատարածքը կազմում է 1,0 հա

7. Ջրելատեղերի հեռավորությունն արոտավայրից պետք է լինի հետևյալ հեռավորության վրա՝

1) կթու կովերի համար՝ առնվազն 1 կմ

2) բտվող խոշոր և մանր եղջերովոր կենդանիների համար՝ առնվազն 1,5 կմ

8. Արոտավայրերում կենդանիների գիշերավայրը պետք է լինի ջրելատեղերից 300-500 մ Հեռավորության վրա:

9.Բնական խոտհարքներն օգտագործման են տրամադրվում խոտհնձի նպատակով

Աշխատակազմի քարտուղար՝ Ա.Կարապետյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
ԱՊԱՐԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀՀ Արագածոտնի մարզ, Ք. Ապարան Բաղրամյան 26, Հեռ. (0252-2-33-93), ֆաքս(0252-2-44-45)
էլ. փոստ՝ aparaniqaxaqapetaran@gmail.com, կայք՝ www.aparan.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10-Ը ՄԱՐՏԻ 2017 Թ Ն 16-Ա

ԱՊԱՐԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԾԱՌԵՐԻ ՍԱՆԻՏԱՐԱԿԱՆ ԷՏՄԱՆ ԵՎ ՉՈՐԱՑԱԾ ՈՒ ԲԱՐԵԿԱՐԳՄԱՆԸ ԽՈՉԸՆԴՈՏՈՂ ԾԱՌԵՐԻ ՀԱՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 51-րդ, <<Բնապահպանական վերահսկողության մասին>> օրենքի 36-րդ հոդվածների, հիմք ընդունելով Ապարանի քաղաքային համայնքի ղեկավարի առաջարկությունը.

Ապարանի քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝

1. Թույլատրել Ապարանի համայնքի ղեկավարին 2017 թ ընթացքում /գարնան և աշնան ամիսներին/ իրականացնելու ծառերի սանիտարական էտման և չորացած ու բարեկարգմանը խոչընդոտող ծառերի հատման աշխատանքներ:

Ավագանի՝ Կողմ (6), Դեմ (0), Ձեռնպահ (0)

Նվարդ Բարսեղյան
Կարեն Գրիգորյան
Էդգար Կարապետյան
Գնել Մուրադյան
Մորիս Սարիբեկյան
Ասատուր Քոչարյան

Համայնքի ղեկավար՝ Գ. Աբրահամյան